

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ ռեկտոր

Խաչատրյան Գ.Կ.

«\_05\_» 05 2014թ.

**Կարգ**

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ  
առևտրային կազմակերպության մագիստրատուրայի 2014-2015 ուսումնական տարվա  
ընդունելության**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 3

“\_30\_” 04 2014թ.

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույնով սահմանվում է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում 2014-2015 ուսումնական տարվա ընդունելության կարգը (այսուհետ՝ Կարգ):
2. Սույն Կարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, Ինստիտուտի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Ինստիտուտի մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգը:
3. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումներ ու նոր հնարավորություններ ընկալելու ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

## II. Մագիստրատուրայի մասնագիտությունները և տեղերը

4. Մագիստրատուրայի 2014-2015 ուսումնական տարվա ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

h/h	Ծածկագիր	Մասնագիտություն	Տեղերի քանակը		
			Ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)		Ուսման վարձի մասնակի գեղջի կիր. (վճարովի)
			ընդամ.	տարկ. իր.	
1	031000	Հայոց լեզու և գրականություն	2	-	18
2	032400	Ռուսաց լեզու և գրականություն	-	-	15
3	031300	Օտար լեզու և գրականություն /անգլերեն/	2	-	18
4	030400	Պատմություն	2	-	18
5	051000	Մանկավարժություն և հոգեբանություն	3	-	22
6		Կրթության կառավարում	2	1	13
7	050200	Ինֆորմատիկա	2	-	18
8	020100	Քիմիա	1 (ԲԶ)	-	14
9	020200	Կենսաբանություն	2	-	13
10	032000	Հանրային կառավարում	3	3	17
Ընդամենը՝			19 (որից 1-ը՝ ԲԶ)	4	166

## III. Մագիստրատուրայի ընդունելությունը, մրցույթի անցկացումը

5. Ինստիտուտի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:  
Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա, կամ սեփական նախաձեռնությամբ՝ լրացուցիչ տեղերի հաշվին, վճարովի հիմունքներով:
6. Ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է երկու փուլով, մրցութային կարգով՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից առանձին մասնագիտություններին հատկացված անվճար և վճարովի տեղերի:
7. Առաջին փուլով ուսուցման անվճար համակարգում մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմանը (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով և առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի համար:
8. Առաջին փուլով ընդունելության համար կարող են դիմել տվյալ մասնագիտությամբ Ինստիտուտի ընթացիկ ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և պետական քննություններից ստացել են «լավ» կամ «գերազանց» գնահատականներ, և որոնց դիպլոմի հավելվածում նշված բոլոր առարկաների քննական գնահատականների միջինը կամ միջին որակական գնահատականը կազմում է.
- «4.00» կամ ավելի միավոր (5-բալանոց համակարգով), «12» կամ ավելի միավոր (20-բալանոց համակարգով), «71» կամ ավելի միավոր (100-բալանոց համակարգով)՝ «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն», «Պատմություն», «Հանրային կառավարում», «Կրթության կառավարում», «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունների համար,
  - 3.75 կամ ավելի միավոր (5-բալանոց համակարգով), «11» կամ ավելի միավոր (20-բալանոց համակարգով), «67» կամ ավելի միավոր (100-բալանոց համակարգով)՝ «Ինֆորմատիկա», «Կենսաբանություն», «Քիմիա» մասնագիտությունների համար,
  - և որոնց համապատասխան ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը երաշխավորել է ուսումը շարունակելու մագիստրատուրայում:
9. Առաջին փուլով Ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ մրցութային կարգով, բացառությամբ «Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» և «Քիմիա» մասնագիտությունների: Նշված մասնագիտություններով ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերով և ընդունելության քննությունների արդյունքներով անցկացվող մրցութի հիման վրա:  
«Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» մասնագիտությունների դիմորդները հանձնում են ընդունելության քննություն մասնագիտությունից և ստուգարք օտար (անզլերեն) լեզվից:
10. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցութն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.
- 10.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով, կամ միջին որակական գնահատականով,
  - 10.2. մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով ,

- 10.3. տպագրված կամ տպագրության ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայություն,
- 10.4. ոչ մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին):
11. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է հունիսի 5-ից հունիսի 10-ը:
12. «Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» և «Քիմիա» մասնագիտություններով անվճար սովորելու համար մրցույթը չհաղթահարած դիմորդները իրավունք ունեն բարելավելու իրենց գնահատականը՝ մասնակցելով երկրորդ փուլով /վճարովի համակարգ/ անցկացվող ընդունելության քննություններին: Այս դեպքում տվյալ դիմորդների վերջնական արդյունք է համարվում ստացած ավելի բարձր գնահատականը:
13. Տարբեր պատճառներով առաջացած թափուր տեղերը համալրվում են ըստ սույն Կարգի դրույթների՝ մրցույթային հիմունքներով:
14. **Երկրորդ փուլով՝** նույն մասնագիտությամբ, վճարովի համակարգում սովորելու համար (առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի) կարող են դիմել Ինստիտուտի, ինչպես նաև այլ բուհերի տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները:
15. Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելությանը կարող են նաև մասնակցել.
- 15.1. նույն մասնագիտությամբ Ինստիտուտի և այլ բուհերի անցած ուս. տարիների բակալավրիատի շրջանավարտները և դիպլոմավորված մասնագետները,
- 15.2. այլ մասնագիտությամբ ներկա և անցած ուս. տարիների Ինստիտուտի և այլ բուհերի բակալավրիատի շրջանավարտները և դիպլոմավորված մասնագետները,
- 15.3. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված անձինք (անվճար՝ ՀՀ կառավարության կողմից տրամադրված պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված անձանց համար նախատեսած անվճար տեղերի տրամադրման դեպքում, կամ վճարովի հիմունքներով):
16. **Երկրորդ փուլով նույն մասնագիտությամբ** ուսուցման վճարովի համակարգ (առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի) մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ մրցույթային կարգով: Մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.
- 16.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով, կամ միջին որակական գնահատականով,
- 16.2. մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով ,
- 16.3. տպագրված կամ տպագրության ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայություն,
- 16.4. ոչ մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին):
17. Երկրորդ փուլով ուսուցման վճարովի համակարգ ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 23-ից օգոստոսի 29-ին:
18. **Երկրորդ փուլով այլ մասնագիտությամբ** մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է բակալավրիատի կրթական ծրագրի ծավալի սահմաններում մասնագիտական առարկա/ներ/ից քննության արդյունքների հիման վրա՝ մրցույթային հիմունքներով, համաձայն սույն Կարգի 16-րդ կետում նշված պայմանների:

19. Այլ մասնագիտություն ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է նույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ փուլերով ընդունելության անցկացումից հետո թափուր մնացած վճարովի տեղերի հաշվին՝ համաձայն սույն Կարգի 16-րդ կետում նշված պայմանների:

#### **IV. Մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովը և ուսանողների հրամանագրումը**

20. Մագիստրատուրայի ընդունելության նպատակով ռեկտորի հրամանով և նախագահությամբ կազմվում է ընդունող հանձնաժողով, որում ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների դեկանները, մագիստրոսական ծրագրերի համակարգողը:
21. Քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են մագիստրոսական պատրաստություն իրականացնող ֆակուլտետների դեկաններ, մասնագիտական ամբիոնների վարիչներ և/ կամ դասախոսներ:
22. Մագիստրատուրայի ուսանողներին որոշելու նպատակով ընդունող հանձնաժողովն ուսումնասիրում, քննարկում է ներկայացված փաստաթղթերը, քննության արդյունքները և անցկացնում է մրցույթ:
23. Հանձնաժողովի անցկացրած մրցույթի արդյունքներով Ինստիտուտի ռեկտորը հրամանագրում է(կցագրում) ընդունված դիմորդներին: Ընդունված ուսանողի հրամանագրումը կատարվում է կցագրումից հետո՝ ուսանողի և Ինստիտուտի միջև պայմանագրի կնքման և ուսման վարձը վճարելու պայմանով:

#### **V. Ինստիտուտի մագիստրատուրա ընդունվելու համար դիմելու ժամկետները և ներկայացվող փաստաթղթերը**

24. Մագիստրատուրայի առաջին և երկրորդ փուլերով ընդունելությունից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով տրվում է համապատասխան հայտարարություն՝ կցելով մագիստրոսի հետ կնքվող պայմանագրի տեքստը:
25. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար գործերի ընդունումը կատարվում է մայիսի 26-ից հունիսի 4-ը, երկրորդ փուլով՝ հունիսի 11-ից մինչև օգոստոսի 28-ը ներառյալ:
26. Ինստիտուտի մագիստրատուրայի դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.
- մագիստրատուրայի ընդունելության դիմում- հայտ՝ Ինստիտուտի ռեկտորի անունով (լրացվում է տեղում),
  - բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները,
  - երաշխավորություն ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդից (ինստիտուտի նախորդ տարիների և այլ բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինծառայությունից զորացրվածներն այն չեն ներկայացնում),
  - ինքնակենսագրություն (CV)
  - անձնագրի պատճենը,
  - 3 լուսանկար (3x4 չափի),
  - տպագրված կամ տպագրման ընդունված աշխատանքների ցուցակը (դրանց առկայության դեպքում):

#### **VI. Մագիստրատուրայի դասերի սկիզբը**

27. Մագիստրատուրայի առաջին կուրսի դասերը սկսվում են 2014թ. սեպտեմբերի 8-ից: